խօս հայերի կանանց հագուստից զանազանւում ու տարբերւում է ամեն բանով։ Ուտիացոց աշխարհի Հայ կանայք, իրենց գլխին փաթաթում են հասարակ լաթեր, որ ձուաձև կերպարանք է ստանում և որը կոչւում է դինգեայ։ Դինգեայի վերևից մինչև ականջները շարան-շարան կախում են արծաթէ դրամներ, որ թէ մանգալիս և թէ գլխով հաւանական կամ բացասական նշան տալիս (ըստորում կանայք բարձր խօսելու իրաւունքից խոպառ զուրկ են Ուտիացոց աշխարհում) զնգզնգալի ձայներ լսուեն։ Դինգեայի վերևի արծաթէ շարան-շարան դրամների վերևից ծածկում են մետաքսէ գոյնզգոյն մի մեծ թաշկինակ, որի կէսը փռւում է կնոջ ուսերից մինչև գօտին, ոգնաշարի ուղղութեամբ, իսկ միւս կէսը իջնում է երեսի և դէմքի վրայով մինչև ներքին ծնօտի կղակը, գլխի աջ ու ձախ և յետևի կողմից էլ՝ արծաթի շղթաների ծայրին յարմարեցրած տափակ և կեռ կարթերով (չանգալ) ամրացնում են գլխի բոլոր զարդարանքները, որպէս զի ճակատի արծաթէ աջ ու ձախ կողմը շարուած շարանները լինէին իրենց տեղում ամուր և պինդ։ Գլխի աջ ու ձախ կողմից, ականջների վերևից դէպի ներքև, մէկ թիզ կամ թիզուկէս երկարութեամբ և չորս մատի լայնութեամբ, հասարակ շորի վրայ կարուած դրամներով կախում են՝ այսպէս ասած, արհեստական ականջներ։ Ականջներ, որոնք յետու առաջ են օրօրւում, կնոջ շարժուելու և կամ արագ-արագ մանգալու ժամանակ և աննկարագրելի զնգզնգոցի ձայներ են հանում։ Իսկ մանկա-